«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ կողմից նախատեսվող Գեղանուշի պոչամբարի նախագծի փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 4-րդ հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

10.07.2024թ. **ք.Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք Կապանի մշակույթի կենտրոնի շենքում 2024 թվականի հուլիսի 4-ին, ժամը 11:30-ին տեղի ունեցավ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ կողմից նախատեսվող Գեղանուշի պոչամբարի նախագծի փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 4-րդ հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատակիցներ՝ Հովիկ Մեսրոպյանը և Գոհար Մինասյանը, «Ակունք ֆիրմա» ՓԲԸ տնօրեն՝ Հովհաննես Նիկողոսյանը, «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի, Կապանի համայնքապետարանի, Սյունիքի մարզպետարանի աշխատակիցներ, ինչպես նաև այլ քաղաքացիներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Առավոտ» օրաթերթի 2024 թվականի հունիսի 22-ի թիվ 110/7111 համարում, ինչպես նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքերի (www.env.am, www.kapan.am) հայտարարությունների բաժնում:

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Գոհար Մինասյանին:

Զեկույց (Գոհար Մինասյան) - Հարգելի հանրային քննարկման մասնակիցներ, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ին «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից փորձաքննության է ներկայացվել Գեղանուշի պոչամբարի նախագծի փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հաշվետվությունը: Ինչպես գիտենք նախնական փուլը արդեն իրականացվել է, այժմ ընթանում է հիմնական փուլը: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն 4-րդ փուլը կազմակերպում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ը քննարկումների պատասխանատուի հետ համատեղ՝ ձեռնարկողի մասնակցությամբ: Հաշվետվությունը ուսումնասիրվել է, ուղարկվել է նախարարության տարբեր ստորաբաժանումներ մասնագիտական կարծիքների ստացման համար, որոնց արդյունքում հաշվետվությունը լրամշակվել է: Եթե ունեք հարցեր, դիտողություններ, առաջարկություններ, ապա կարող եք բարձրաձայնել, 5 աշխատանքային օրվա ընթացքում կարող եք ներկայացնել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

Գեղանուշի պոչամբարը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի Գեղանուշ և Կապան բնակավայրերի վարչական տարածքում: Կապանում զբաղեցնում է 19 հա, Գեղանուշում՝ 21 հա և գտնվում է 700-1250 մ բացարձակ բարձրության վրա: Նախատեսվում է իրականացնել պոչամբարի պատվարի բարձրացում 10 մ-ով, որը կատարվելու է 2 փուլով՝ 2,5 մ քայլերով: Պոչամբարի պատվարի բարձրացման վերջնական նիշը լինելու է 851 մ: Բարձրացումը իրականացվելու է հանքի դատարկ ապարները օգտագործելով: Պոչամբարը լցնովի տիպի է: Ըստ 2023 թվականի տվյալների՝ պոչամբարում կուտակված են եղել 2,35 մլն. մ^3 պոչեր: Նախագծային ծավալը կազմում է 11,73 մլն. մ^3, այսինքն պատվարի բարձրացումը կստեղծի 4,375 մլն. մ^3 ծավալ, ինչը կապահովի հարստացուցիչ ֆաբրիկայի աշխատանքը: Պոչամբարի թունելի և արագահոսի փոփոխություն չի սպասվում, ջրամբարից Գեղանուշի պոչամբարի տարածքից ջրերի հեռացման համակարգը մնում է անփոփոխ: Բնապահպանական մասով շրջակա միջավայրի վրա սպասվում են որոշակի ազդեցություններ, որոնց մեղման համար ընկերությունը նախատեսել է որոշ միջոցառումներ, օրինակ՝ ամրաբեռնման շեպերի վրա նախատեսվում է անձրևաջրերի հեռացման համակարգ, փոշեգոյացման նվազեցման նպատակով պատվարների և ամրաբեռնման մակերեսը չոր և շոգ եղանակին պարբերաբար կջրցանվի,

պոչամբարի պոմպակայանում տեղադրված են 400 մ^3 և 600 մ^3 վթարային ավազաններ՝ պոչերի հավաքման և պոչամբար մղման համար:

Խոսք (Գոռ Թադևոսյան)- Եթե չկան հարցեր, ապա զեկույցի համար խոսքը փոխանցեմ «Ակունք ֆիրմա» ՓԲԸ տնօրեն՝ Հովհաննես Նիկողոսյանին:

Զեկույց (Հովհաննես Նիկողոսյան) – Նախագիծը ամբողջությամբ ներկայացվել է, եթե կան հարցեր՝ պատրաստ եմ պատասխանել:

Հարց (Արթուր Մովսիսյան)- Ես մի խնդրանք ունեմ, խորհրդակցությունից հետո մասնագետների հետ միասին բարձրանանք Գեղանուշի պոչամբար, շատ բաներ կան, որ չեմ ուզում բարձրաձայնել, գնանք մեր աչքով նայենք: Մարդկային, թե մասնագիտական առումով ոչ մի խնդիր չկա, ուզում ենք ամեն ինչ լավ լինի, և՛ շահագործվի կոմբինատը, և՛ մարդիկ աշխատավարձ ստանան՝ հասկանալով այսօրվա իրավիճակը, այսպես կոչված Սյունիքի միջանցքի հետ կապված: Բաներ կան չեմ ուզում բարձրաձայնել, ժամանակին ասել եմ, եկեք բարձրանանք այնտեղ, կուզեք կտանեք վարչապետին կներկայացնեք, կուզեք՝ Բայդենին... Պատճառահետևանքային կապերի օրենքները ոչ մենք ենք հորինել, ոչ էլ մեզնից հետո են հորինել: Բանը նրանում է, որ երբ այն տարիներին նախատեսվում էր այս քաղաքում կառուցել պոչամբար, ես դրա մասին էլ կարող եմ ասել մինչև վերջին ատյանները՝ իմ կարծիքով այդ ժամանակ դիտարկություններ են եղել, ինչի արդյունքում առաջացել է այս իրավիճակը: Հարց է առաջանում՝ արդյո՞ք մեզ սպիտակ ցեղասպանության առաջ չեն դրել: Այս մտավախությունը կա, դրա համար էլ եկեք մասնագետներով բարձրանանք վերև, ես մի երկու բան պիտի ցույց տամ Ձեզ: Սա ազգային անվտանգության խնդիր է:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Մենք համաձայն ենք, բայց մինչ այդ մի բան ավելացնեմ՝ պոչամբարը հիդրոտեխնիկական կառույց է, այն ամեն տարի անցնում է մասնագիտական փորձաքննություն: Այս տարի, փետրվար ամսին անցել է փորձաքննություն: Ես հիդրոտեխնիկ չեմ, չեմ կարող այդ հիդրոտեխնիկական կառույցի որոշ թերություններ վիզուալ տեսնեմ, բայց եթե դուք ասում եք գնանք, մեծ հաճույքով կգամ:

Հարց (Գոհար Մինասյան) – Համապատասխան վարչությունների կողմից ստացված կարծիքների համաձայն՝ ունենք անտառային հողերից 0,3 հա տարածք, որտեղ «Հայանտառ» ՊՈԱԿ-ը չի առարկում, եթե համապատասխան պայմանագիր կնքվի: Կխնդրեի այդ հարցին պատասխանել:

Պատասխան (Վահրամ Ավագյան)- Այդ գրությունը մեզ հայտնի է և մենք ակնկալում ենք, եզրակացությունը դրական լինելու պարագայում, այդ պայմանի ամրագրում որպես

գործունեության իրականացման նախապայման և պատրաստ ենք այդ նախապայմանը իրականացնելու:

Հարց (Գոհար Մինասյան) – Համաձայն կադաստրի կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության պոչամբարի նախագծային տարածքը զբաղեցնում է 40 հա, իսկ փաստացին 34 հա է:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Պոչամբարի ներքևի մակերեսը 42 է, իսկ ռեկուլտիվացիայի մակերեսը՝ 24 է, թե 30: Պոչամբարը ինքը աճում է վերև, ամեն անգամ պատնեշը բարձրացնելուց նեղանում, բարձրանում է վերև: Այսինքն ներքևի ու վերևի մակերեսները լրիվ տարբեր են: Ներքևը մեծ կլինի, դա հիմքն է, վերևը փոքր կլինի: Նախագծայինը ավել է, որովհետև մենք ամրաբեռնում ենք անում, թեքություններ ենք տալիս, ներքևի մակերեսը ավելանում է: Իսկ ընդհանրապես հիմքն ու պոչամբարի վերևը նույնը չեն կարող լինել:

Խոսք (Գոռ Թադևոսյան)- Մենք մտավախություն ենք հայտնել ջրահեռացման թունելի առկա վիճակի մասին, առաջարկել ենք մասնագիտական ուսումնասիրություն իրականացնել ներկա վիճակի անվտանգության վերաբերյալ: Հաշվետվությունում նշված է, որ 2024թ փետրվարի 15-ին և 16-ին «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ կողմից իրականացվել է Գեղանուշ գետի տեղափոխման թունելի բետոնի երեսարկի վիճակի ակնադիտական զննում: Իրականացված հետազոտության հիման վրա կարելի է եզրակացնել, որ Գեղանուշ գետի տեղափոխման թունելի բետոնի երեսակը վերապահումներով աշխատունակ է, քանի որ թունելը անընդհատ աշխատանքային վիճակում է և Գեղանուշի պոչամբարի կայունության համար ունի ռազմավարական նշանակություն: Առկա թերությունները և վնասվածքները պետք է վերացնել և պարբերաբար զննել թունելի տեխնիկական վիճակը: Մասնավորապես՝ անհրաժեշտ է իրականացնել բետոնի որակի մանրակրկիտ հետազոտություն, նմուշառում ֆիզիկամեխանիկական և քիմիական անալիզի համար, կանխարգելիչ առաջարկվող միջոցառումներ ամրակապի, պաշտպանիչ շերտի, քայքայված հատվածների վերականգնման համար:

Հարգելի գործընկերներ, մենք գտնում ենք, որ ակնադիտական զննությունը բավարար չէ թունելի վիճակի ուսումնասիրության համար, առավել ևս, երբ եզրակացությունում էլ նշված է, որ վերապահումներով է աշխատունակ և մի շարք մտահոգիչ ձևակերպումներ կան: Առաջարկում ենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ին փորձաքննական եզրակացության մեջ, որպես պահանջ, ներառել

ջրահեռացման թունելի գործիքային մասնագիտական ուսումնասիրություն և ուսումնասիրել ընդհանուր թունելի վիճակը, պարզել բետոնի որակը, բետոնի հետնամասում առկա խորշերը և ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա տալ համապատասխան լուծումներ: Խնդրում և պահանջում ենք, որպեսզի փորձագիտական եզրակացության մեջ այս պահանջը լինի:

Պատասխան (Վահրամ Ավագյան)- Ընկերության պատվերով «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ կողմից իրականացված հետազոտությունը եղել է ակնադիտական, գործիքային, որը իր մեջ ներառել է շմիտի մուրճով ուսումնասիրությունը և 80-50 սկաներով սկանավորվել է ամբողջ ներքին մակերեսը: Թե շմիտի մուրճով, թե սկաներով ուսումնասիրության արդյունքները ներկայացված են հաշվետվության մեջ, որի պատճենները կտրամադրվեն և՛ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ին, և՛ Կապանի համայնքապետարանին:

Պատասխան (Գոռ Թադևոսյան)- Ամեն դեպքում պահանջը եզրակացությունում խնդրում եմ ներառել: Իհարկե Ձեր կողմից ներկայացված ուսումնասիրության արդյունքները կնայենք և եթե դա բավարարի մեր պահանջներին, ապա կընդունենք ի գիտություն, իսկ եթե ոչ, ապա անհրաժեշտ է գործիքային, մասնագիտական խորը ուսումնասիրություն և ուսումնասիրության արդյունքներում ի հայտ եկած խնդիրներին տալ լուծումներ:

Հարց (Գոհար Մինասյան) – Հաշվի կառնվի դիտողությունը, բայց ևս մեկ հարց ունեմ կապված տարածքի Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների վերաբերյալ: Դուք չեք ընդունել առարկությունը, խնդրում եմ պարզաբանել:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Զոոլոգների, բուսաբանների կողմից իրականացվել են հետազոտություններ, որոնց արդյունքում մեր սանիտարապաշտպանական գոտում, այդ 300 մետրի վրա նման Կարմիր գրքային տեսակներ չեն հայտնաբերվել: Կարող եմ ասել, ով է ուսումնասիրել բուսականությունը՝ Բորյան էր իր խմբով: Տարածքում, Զանգեզուրի շրջանում այնքան Կարմիր գրքային կենդանիներ և բույսեր կան, բայդ դա կապ չունի մեր սանիտարապաշտպանիչ տարածքի հետ: Դաշտային հետազոտությունների հիման վրա է հաշվետվության մեջ ամեն բան գրվել:

Պատասխան (Գոհար Մինասյան) – Բայց շրջակայքում, ըստ կոորդինատների կան Կարմիր գրքի ներկայացուցիչներ:

Պատասխան (Հովհաննես Նիկողոսյան) – Շրջակայքը իմ սանիտարապաշտպանիչ գոտին է: Այնտեղ, որտեղ պոչամբարը ազդեցություն ունի, այնտեղ Կարմիր գրքի

ներկայացուցիչներ չկան: Իմ ազդեցությունը չի կարող լինել Սիսիանի կամ Գորիսի շրջանի վրա: Իմ ազդեցությունը միայն սանիտարապաշտպանիչ գոտու վրա է, որտեղ ի դեպ լավ բուսական և կենդանական աշխարհ է պահպանվել:

Խոսք (Ռոբերտ Կոստանդյան)- Որպես մարզպետարանի աշխատակազմի ներկայացուցիչ, ուզում եմ ասել, որ առաջարկություններ և դիտողություններ չունենք:

Ամփոփում (Գոռ Թադևոսյան)- Հարգելի գործընկերներ, եթե այլ հարցեր չկան, քննարկումը համարենք ավարտված, շնորհակալություն եմ հայտնում բոլորին մասնակցության համար:

Հանրային քննարկման պատասխանատու՝
Կապան համայնքի ղեկավար **Գևորգ Փարսյան**

Ձեռնարկող՝
«Կապանի ԼՀԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն **Սասուն Ավետիսյան**

Հանրային քննարկման վարող՝
Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ **Գոռ Թադևոսյան**

Հանրային քննարկման արձանագրող՝
Կապանի համայնքապետարանի
գյուղ. և բնապահպանության բաժնի առաջ. մասնագետ **Արմինե Սահակյան**